այնքանով, որքանով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի «9.4» ենթակետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով դատարաններ տրվող հայցադիմումների, դիմումների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով.

«Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների բողոքարկման հետ կապված վեճերով բազային տուրքի 50-ապատիկի չափով:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայցվորի կողմից ներկայացված հայցը հիմնավոր է և ենթակա է բավարարման, հետևաբար, Դատարանը գտնում է, որ Պատասխանողից հօգուտ հայցվորի ենթակա է բռնագանձման նաև վերջինիս կողմից նախապես վճարված պետական տուրքի գումարը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 191-192-րդ, 234.12-րդ հոդվածներով

4. <u>Եզրափակիչ մաս.</u>

ՎՃՌԵՑ

1. <<ԳՐԻՆ ՕՊՇՈՆ>> ՍՊԸ-ի և <<Պրեմիում Շին>> ՍՊԸ-ի հայցն ընդդեմ ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի՝ <<ԳՐԻՆ ՕՊՇՈՆ>> ՍՊԸ-ին և <<Պրեմիում Շին>> ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ն. Բաղդասարյանի 2023թ. Սեպտեմբերի 25-ի թիվ 968-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, բավարարել:

2. Անվավեր ճանաչել ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ն. Բաղդասարյանի 2023թ. Սեպտեմբերի 25-ի թիվ 968-Ա որոշումը՝ <<ԳՐԻՆ ՕՊՇՈՆ>> ՍՊԸ-ին և <<Պրեմիում Շին>> ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասով:

3. ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանից հօգուտ <<ԳՐԻՆ ՕՊՇՈՆ>> ՍՊԸ-ի և <<Պրեմիում Շին>> ՍՊԸ-ի բռնագանձել 50.000 ՀՀ դրամ, որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ Վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝ ԱՐՏՈՒՇ ԱՎԱԳՅԱՆ